

ԱՆԴՐԵ Ն. ՄԱՆՈՒԵԼՑԱՄ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՄԵԺ ՊԱՏԵՐԱՁՄԻՑ ԱՌԱՋ

### III

ՌՈՒՍ - ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԽՈՒՄՆ  
ՈՒ ՎԵՐԶՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

§ 1. Հայկական բարենորոգումների ամբողջ տեւզութեան ընթացքին Գերմանիան, անկասկած, խաղաց այն գերը, որ նրան վերագրում էր Գուլկեւիչը իր հաղորդագրութեան մէջ։ Պէտք է ընդունել, սակայն, որ գերման արտաքին գործոց նախարարը չէր բաժանում այն վախերը, որ ռուսական քաղաքականութիւնը ներշնչում էր բարոն Վանգէնհայմին, և հաւատում էր պ. Սազոնովի յայտարարութիւնների պարկեշտութեան, թէ Ռուսաստանը աչք չունի Թիւրքահայաստանի վրա։ Բայց եւ այնպէս, գերման դիւանագիտական գրագրութիւնները մեզ ցոյց են տալիս, թէ անկախ ռուսական գործոնից՝ բարենորոգումների հարցը ինքնին շատ անախորժ երկընտրանքի առջեւ էր գրել Գերմանիային։ Եւ, յիրաւի, Գերմանիայի կիրառած քաղաքականութիւնը Թիւրքիայում հետապնդում էր երկու նպատակ՝ մէկը աւելի մօտաւոր, միւսը՝ հեռաւոր։ Մի կողմից նայածուն յաջողութեամբ աշխատում էր Թիւրքիայում գրաւել գերակշռ անտեսական դիրք, որի ողնաշարը համարւում էր Բաղդադի երկաթուղին։ Պարզ է, որ տնտեսական այս ազդեցութեան պահպանութեան եւ ամրապնդման համար ամբողջ Օսմանիան կայսրութեան սահմաններում, Բերլինի կառավարութիւնը պէտք է քաղաքական աջակցութիւն ցոյց տար Բ. Դրան։ Բայց միւս կողմից, գերման կառավարութիւնը ի նկատի ունէր Օսմանիան կայսրութեան վիլուգումը աւելի կամ պակաս մօտաւոր ապագայում եւ այս նախատեսութեամբ պատրաստում էր Թիւրքիայի բաժանման՝ ցանկութիւն ունենալով

ստեղծել Փոքր Ասիայում՝ յաստեկ գերմանական՝ «աշխատանքի շրջան» (Arbeitézone). գերմանական վաւերագրերից կարելի է եղանակացնել, որ եթէ պետութիւնները ընդունէին նման մի շրջանի ստեղծումը, Գերմանիան, իրեն համար պատեհ համարւած ժամանակ, այլեւս չէր հակառակի բաժանման։ Այստեղից եւ՝ Վիճելմը շրջապատէի հայկական քաղաքականութեան շրջունակական տատանումը՝ մի կողմից դժգոհ չթողնել Հայստանում որեւէ լուրջ բարենորդում չկամեցող բարեկամ Թիւրքիային, միւս կողմից՝ վախիրտչեցնելու հայկական տարրը, որի մի խոչոր մասը մտնում էր գերմանական «աշխատանքի շրջանի» մէջ։

§ 2. 20-րդ դարու ոռւսական քաղաքականութիւնը, որ յաճախ չէր գիտակցում Գերմանիայի կողմից, էապէս նման էր գերման քաղաքականութեան՝ որքան հնար է երկար պահպանել Օսմանեան Կայսրութիւնը. մասնակցել բաժանման այն օրը, երբ նրա վիլուգումի առաջն այլեւս կարելի չլինի առնել։ Տարբերութիւնները երկու քաղաքականութեանց միջնեւ վերաբերում էին միայն թրքական ժառանգութիւնից պահանջւած մասի չափին։

Եւ, իրօք, ինչպէս արդէն վերը ցոյց տւինք, ոռւսական քաղաքականութիւնը բնաւ նպատակ չունէր տակնուվրայութիւն առաջ բերել Մերձաւոր Արեւելքում։ Նրա անմիջական նպատակն էր պատերազմական նաւերի ազատ անցքի իրաւունքի ապահովումը՝ նեղուցներով։ Ռուսաստանի հաստատումը Ռուսորի եղերքին նա ի նկատի ունէր միայն Օսմանեան Կայսրութեան վիլուգումի պարագային, որի փութացումը ամենեւին չէր մտնում իր հաշիւների մէջ։ Բայց եթէ հակառակ իր ամբողջ բարեկամութեան Թիւրքիայի նկատմամբ Գերմանիան սրա հողերից իրեն համար մի «աշխատանքի շրջան» էր ձեւում, որը նրան իրաւունք պիտի տար մի օր մասնակցելու Օսմանեան Կայսրութեան վերջնական հաշւեյարդարին, Ռուսաստանը, որ ի նկատի ունէր միայն իր հաւանական հաստատումը Ռուսորի ափերին, անտեսական ամենաչնչին գործունէութիւն իսկ ցոյց չէր տալիս Օսմանեան Կայսրութեան սահմաններում՝ իրեն վերապահելով միայն բռնել Թիւրքիայի տեղը նեղուցների եղերքին, երբ վերջինս խորտակւի Յարերի Կայսրութեան կողմից կախում չունեցող հանդամանքների ազգեցութեան տակ։

Այս քաղաքականութեան վերջին օրինակը կարելի է տեսնել Ռուսաստանի գերքի մէջ Թիւրքիայի պատերազմին մասնակցելու նախօրեակին։ Պ. Սաղոնովը մտագիր էր առաջարկել Բ. Դրան, իրեւ հատուցում չէզոքութեան համար, բարեացակամ վերաքննութեան

և նժամարկել թիւրքերի բաղձանքները կապիտուլեասիոնների բնագաւառում և ապահովել Թիւրքիայի ամբաղջութիւնը: Այս առաջարկութեան բնագիրը, որ մշակւած էր Ֆրանսայի և Անգլիայի գեոպահների հետ համախորհուրդ, ձեւափոխւեցաւ Բրիտանական կառավարութեան վճռական պահանջի վրա,\*) և վերջնական բնագիրը, որ Բ. Դրան յանձնեցաւ 1914 թ. օգոստ. 30-ին, Թիւրքիայի ամբողջութեան երաշխիք ասաջարկում էր միայն ներկայ պատերազմից շահելու փորձեր անող ամէն մի քշեամու դէմ: Այսպիսով, յստակ տեսնուում է, որ Ռուսաստանն էր, որ ապահովութեան իր կարծ ու կարուկ առաջարկով աւելի սիրայօժարութիւն էր ցոյց տալիս անխռութ պահելու թիւրքական չէզոքութիւնը և մի կողմ էր թողնում նեղուցների վերաբերմամբ սնուցած բոլոր անմիջական նպատակները:

Թիւրքիայի մասնակցութիւնը պատերազմին, բնականաբար, կուխեց դաշնակիցների պատերազմական նպատակները: Ռուսաստանը տեսու, թէ հասել է ժամը իր դարսաւոր նպատակի իրագործման նեղուցների բնագաւառում, և նրա դաշնակիցները ճանաչեցին ռուսական բաղձանքների օրինականութիւնը՝ միաժամանակ ապահովելով նաև իրենց սեփական շահերը Ասիական Թիւրքիայում: Ռուսաստանը ճանաչեց Ֆրանսայի և Անգլիայի ազդեցութեան շրջանները Թիւրքական Ասիայում, որոնք ամբաղնդեցին Սայքս - Փիքս հռչակաւոր համաձայնութեամբ, եւ պ. Սաղոնովի ու Փրանսական համբաւետութեան Պետրոգրադի գեոպահն պ. Պալէոլոդի միջեւ կատարւած նոտաների փոխանակման հետեւանքով, 1916 թ. ապր. 26-ին, Թիւրքահայաստանը բաժանեցաւ Ֆրանսայի և Ռուսաստանի միջեւ: Այդ համաձայնութեամբ Ռուսաստանը դրաւում էր էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի շրջանները և Քիւրդիստանի մի մասը, իսկ Ֆրանսան ստանում էր Կիլիկիան՝ սահմանակից շրջաններով և Ալա Դաղի, Կեսարիայի, Ակ Դաղի, Իլգիդ Դաղի, Զարայի, Ակնի և Խարբերդի միջեւ ընկած հայկական հողերը:

Սակայն եւ այնպէս, եթէ աչքէ անցնելու լինենք 1924 թ. Խորհրդական կառավարութեան կողմից հրատարակւած ոռու գիւտանագիրական վաւերագրերը, հեշտութեամբ կը համոզւենք, որ նոյն պատերազմի ամենաեռուն շրջանին եւ ոռու-թրքական ճակատի վրա տարած յաղթութիւններից յետոյ էլ, ցարական կառավարութիւնը բնաւ չի մտածել գրաւել Թիւրքահայաստանը: Նրա պատերազմա-

\*) Կումս թեմկենդորֆի հեռագիրը պ. Սագոնվին 29-16 օգոստ., 1914 թ.  
«Թիւրքական Ասիայի բաժանումը» (ռուսերէն), էջ 68-69:

կան միակ նպատակը եղել է Ռուսաստանի տեղաւորումը Պոլսում և նեղուցների եզրքին, մի նպատակ, որ ի վերջոյ ճանաչուեց և դաշնակիցների կողմից։ Բայց Ֆրանսան եւ Անգլիան, իբրեւ փոխհատուցում, պահանջեցին իրադործել իրենց սեփական յաւակնութիւնները թրքական ժառանգութեան, եւ Ռուսաստանը ընդունեց դրւած պայմանները, ըստ որոնց Ֆրանսան պիտի գրաւէր Սիւրիան ու Կիլիկիան յարակից մասերով։

Վերեւ յիշւած ոռւսական վաւերագրերից երեւում է, որ միջդաշնակցային բանակցութիւնների ընթացքին հայերն էլ անգործ չէին և աշխատում էին դաշնակիցներին ընդունել տալ ստեղծումը մի ինքնավար Հայաստանի Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Մեծ-Բրիտանիայոց երբեակ հովանաւորութեան ներքոյ։ Նախայիշւած վաւերագրերը ցոյց են տալիս նաեւ, որ Ռուսաստանը բարեհաճ վերաբերում պիտի ունենար դէպի այդ ծրագիրը, եթէ կարողանար ստանալ Փրանսական և կառավարութեան հաւանութիւնը։ Ռուս արտաքին գործոց նախարարը նախազգուշացքեց հայերին, որ, հակառակ դէպքում, ինքը չպիտի պաշտպանէ նրանց պահանջները։ Ի վերջոյ, երբ Փրանսական կառավարութիւնը իր շահերին տեղի համապատասխան համարեց Հայաստանի մի մասը մտցնել իր անմիջական ազգեցութեն ննթարկելիք ըրջանի մէջ, Ռուսաստանը, որ կապւած էր նեղուցների համաձայնագրով, այլևս որեւէ բանաւոր պատճառ չունէր հրաժարաւելու թիւրքահայաստանի Կովկասին հարեւան մասի գրաւումից։ այլևս ակներեւ էր, , որ այս ըրջանը, մանաւանդ 1915 թ. կոտորածներից յետոյ, չէր կարող նորից գրւել Օսմանեան տիրապետութեան տակ։\*)

#### ԳԼՈՒԽ IV

##### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ցարական կառավարութեան գիրքը մէծ պատերազմի ընթացքին միայն հաստատութիւնների, որոնք յանգեցին Հայաստանի բաժանման Փրանսութեան անկեղծութիւնը, մի քաղաքականութիւն, որի նպատակն

\*) Այսուղի, ծանօթութեան մէջ, հեղինակը մանրամասօրէն բւում է ընթացքը այն բանակցութիւնների, որոնք յանգեցին Հայաստանի բաժանման Փրանսութեան առաջնորդութիւնը։ Պ. Ա. Մանդելշտամի առաջ բերած տեղեկութիւնները առնած են բոլշևիկների կրտսարակած «Ասիական Թիւրքիայի բաժանութե» հատորից։ Մենք յայս ունենք աւելի հանգամանք անդրադանալ այդ նիւրին, այդ պատճառով, ծանօթութիւնը չենք դնում այսուղի։ ԽՄԲ.

էր՝ բարենորոգումներ մացնել Հայաստանում, որոնք հետագային թիւրեւս յանդէին ինքնավարութեան. այդ քաղաքականութիւնը բը-նաւ չէր հետապնդում գրաւման ձգումամբ: 1912-1914 թւականների Ռուսաստանը ցանկութիւն չունէր ստանձնելու Թիւրքահայաստանի վարչութեան հոգու: 1915 թւականի Ռուսաստանը ընդունեց Սայքս - Փիֆօյի համաձայնութիւնը Փոքր Ասիան ազգեցութեանց գոտիների բաժնելու մասին, որ առաջարկեց իրեն Ֆրանսայի և Անգլիայի կողմից, իրեւ գործադրութիւն նեղուցների համաձայնութեան: Եւ նոյն այս Ռուսաստանը լոկ համաձայնեց Հայաստանի բաժանման իր և Ֆրանսայի միջեւ, ինչպէս համաձայնել էր և երրեակ հովանաւորութեան ինքնավար Հայաստանի նկատմամբ:

1914 թ. փետր. 8-ի լարենորոգումների համաձայնութիւնը կարծես թէ Ռուսաստանի և Գերմանիայի ուժերի յարաբերութիւնն էին յատկանշում եւ ըստեայն՝ նաեւ Երրեակ Համաձայնութեան և Երրեակ Զինակցութեան ուժերի յարաբերութիւնը: Այդ համաձայնութիւնը կրեւ պարկեշտ մի իրաւախոհութիւն, լաւագոյն ապագայի որոշ վերելքի մի մեկնակէտ էր թւում ապարախտ հայ ժողովրդի համար: Աւազ, միայն պատրանք եղաւ այդ, որ շուտով յօդը ցնդեց: Դաշնակիցների մեծ պատերազմի ընթացքին կազմած ծրագիրը, բաժնելով հայ ազգը երկու հարեւանի՝ նրանցից իւրաքանչիւրը դնում էր մի քաղաքակիրթ պետութեան իշխանութեան տակ: Բայց ազգային Ռուսաստանի անհետացումն ու փոխանակումը խորհրդային պետութեամբ շուտով ունեցաւ իր ահաւոր անդրադարձումը Թիւրքահայաստանի ճակատագրի վրա: Ճիշտ է, յաղթական դաշնակիցները 1920 թ. օգոստ. 10-ի Սեւրի գաշնագրով Հայաստանը յայտարարեցին անկախ: Նոյնիսկ նախագահ Վիլսընին յանձնեցին Հայաստանի սահմանների գծման գործը: Բայց շուտով, քաղաքական հանդամանքների ստիպւմով, նրանք արմատապէս փոխեցին իրենց ընթացքը: Ուժասպառ մեծ պատերազմից եւ յանկարծ իրենց դէմ դանելով հէնց Թիւրքահայաստանի կենտրոնում Մուսաֆա Քէմալի ստեղծած դիմագրութեան մի օջախ, դաշնակիցները, համաձայնեցին արեան կամ սակու նոր զոհողութիւններ անել: Նրանք մերժեցին նախագահ Վիլսընի վճիռը, որով ընդարձակ հողեր էին արւում Հայաստանին, եւ իր բախտին լքեցին Հայաստանը: Ազգերի Դաշնակցութիւնը իր հերթին մերժեց իր գիրկն ընդունել նորածին պետութիւնը: Այս մերժումը, Հայաստանի անկախութեան ճանաչումից միայն մի քանի ամիս յետոյ, ունեցաւ այն հետեւանքը, որ հէնց այդ անկախութիւնն էլ վերացւեց բոլցեւիկների

և թիւրքերի միացեալ հարւածների տակ (1920 թ. դեկտ.)\*)

Այսպիսով հայկական խնդիրը թիւրքիայում լուծւեց հակառակ սուսական ցանկութիւնների: Ենթարկւելով պատմական անհրաժեշտութեան՝ Յարական Ռուսաստանը իր երկարատեւ գոյութեան ընթացքում նւաճեց և իր մէջն առաւ շատ ժողովուրդներ, բայց ուրիշներին էլ հզօրապէս աջակցեց ազատագրւելու, ինչպէս յոյներին, բուլգարներին, սերբերին, սումանացիներին: Եւ սաոյդ է, որ Ազգային Ռուսաստանի չնորհիւ էր, որ անաշառ Կլիօն՝ պատմութեան մուսան Պատմութեան գրքում արձանագրեց և 1914 թ. վետր. Տի ակար: Անհետանալրուց առաջ, Յարերի Ռուսաստանը հայերի նկատմամբ ցոյց տւեց անշահասիրութեան մի ազնիւ քայլ, որ ոչ մի զբրպարտութիւն չի կարող արատատորել: Հայկական անկախութիւնը ողբերգորչն թաղւեց նոր թիւրքիայի կասուցած չէնքի տակ: Բայց թերեւս մի օր, թիւրք պատմաբաններն իրենք իսկ կընդունեն անկեղծութիւնն ու անշահաբնդրութիւնը սուս ազատագրական ճիգերի 1914-ին, որոնք ուղղւած էին ոչ թէ թիւրք ազգի, այլ որդնոտած Օսմանեան կայսրութեան դէմ: Թերեւս մի օր, նոր թիւրքիան և նորէն ազգային զարձած Ռուսաստանը վերյիշեն 1914 թ. ակար և դժբախտ հայ ազգի ճակատագիրը տնօրինեն տւելի մեծահոգութեամբ... “Di futura nos celarunt”: Ամէն պարագայի մէջ, ինչ եւ լինի հետնորդների զատավճիռը հայկական ահաւոր ողբերգութեան բուն պատճառների մասին, մի կէտ թւում է այլեւս ընդունած պատմաբանների համար:

Մեծ պատերազմի հախօրեալին, 1913 և 1914 քականներին, Ռուսաստանը ոչ մի դիտաւորութիւն չի ունեցել գրաւելու թիւրքահայատանը. հա ուզում էր հայ ժողովրդի վերաբերմամբ կիրառել մարդատէր միջամտութեան իսկական մի գործ: Ազգային միակ շահը, որ Ռուսաստանը կարող էր քաղել 1914-ի ակտից, երէ վերջինը գործադրւէր, ոչ թէ որեւէ «աշխարհակալական» փառասիրութիւն էր երեւան բերելու, այլ կունենար այն հետեւանէր, որ աշխարհում կանէր Ռուսաստանի բարոյական հեղինակութիւնը և ռուս պատճառների մասին, մի կէտ թւում է այլեւս ընդունած պատմաբանների համար:

Փարիզ.

(Վերջ)

\*) Գետութիւնների եւ Ազգերի Դաշնակցութեան բռնած գիրքը Հայաստանի հանդեպ հեղինակը երկարօրէն ներկայացրել է իր մի ուրիշ աշխատութեան մէջ - “La Société des Nations et les Puissances devant le problème Arménien”.